

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՅՎԱԶՅԱՆ ՄԱՐԻԱՄ ԳԵՎՈՐԳԻ

ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.03 Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ – 2026

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АЙВАЗЯН МАРИАМ ГЕВОРГОВНА

ПРОБЛЕМЫ ПРАВОВОЙ ОХРАНЫ ИСПОЛНЕНИЙ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.03 – Частное право: гражданское право; торговое (коммерческое) право; международное частное право; семейное право; трудовое право; право социального обеспечения.

ЕРЕВАН-2026

**Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում**

Գիտական ղեկավար՝ իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արփինե Աշոտի Զովհաննիսյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Արմեն Մերուժանի Զայկյան

իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ
Արսեն Աշոտի Թավադյան

**Առաջատար կազմակերպություն՝ Զայաստանի Զանրապետության
Արդարադատության ակադեմիա**

Պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի ապրիլի 9-ին ժ. 14³⁰-ին
ՀՀ ԲԿԳԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության
001 մասնագիտական խորհրդի նիստում (0025, ք. Երևան, Ալեք Մանուկյան
1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական
համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքված է 2026 թվականի մարտի 6-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական

քարտուղար, իրավ. գիտ. թեկ.

ժ. Ա. Ստեփանյան

**Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете**

Научный руководитель:

кандидат юрид. наук, доцент
Арпине Ашотовна Оганнисян

Официальные оппоненты:

доктор юрид. наук, профессор
Армен Меружанович Айкянц

кандидат юрид. наук, доцент
Арсен Ашотович Тавадян

Ведущая организация:

**Академия юстиции Республики
Армения**

Защита состоится 9-го апреля 2026 года в 14³⁰ часов на заседании
Специализированного совета КВОН 001 по юриспруденции при Ереванском
государственном университете (0025, г. Ереван, ул. Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных
работников библиотеки ЕГУ.

Автореферат разослан 6-го марта 2026 года.

Ученый секретарь специализированного совета:

кандидат юридических наук

Ж. А. Степанян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակներում մտավոր սեփականության իրավունքը, որպես քաղաքացիական իրավունքի հիմնարար ճյուղ, գտնվում է արագընթաց զարգացումների և խորքային վերափոխումների փուլում: Եթե մինչև անցյալ դարի երկրորդ կեսն այն հիմնականում սահմանափակվում էր հեղինակային և արտոնագրային իրավունքներով, ապա այժմ իրավակարգավորման դաշտում հայտնվում են նոր ինստիտուտներ, այդ թվում՝ հարակից իրավունքները: Վերջիններս հատկապես արդիական են թվային դարաշրջանի պայմաններում, երբ ստեղծագործությունների ստեղծման, վերարտադրման և տարածման եղանակները ենթարկվում են աննախադեպ փոփոխությունների:

Հարակից իրավունքների համակարգում առանցքային նշանակություն ունի կատարումների և դրանք կատարողների իրավական պաշտպանությունը: Եթե նախկինում կատարողների իրավունքների պաշտպանության խնդիրները գրեթե չէին բարձրացվում, ապա տեխնոլոգիական առաջընթացը և հատկապես վերջին տասնամյակների թվայնացման գործընթացները առաջ են բերել դրանց խորքային վերլուծության և արդյունավետ պաշտպանության անհրաժեշտություն:

Հատկանշական է, որ միջազգային իրավունքի մակարդակում կատարողների իրավունքների առանձին ճանաչումը առաջին անգամ տեղի ունեցավ 1961 թվականին՝ «Կատարողների, հնչյունագրեր արտադրողների և հեռարձակող կազմակերպությունների իրավունքների պահպանության մասին» Ջոնմի կոնվենցիայի ընդունմամբ: Սա վկայում է, որ մտավոր սեփականության իրավունքի այս ենթաճյուղը համեմատաբար նոր է, և դրա կիրառման ոլորտում առկա են տարաբնույթ մեկնաբանություններ թե՛ միջազգային, թե՛ ազգային իրավակարգերում:

Նոր տեխնոլոգիաների, մասնավորապես համացանցային և թվային հարթակների զարգացումն իր հերթին առաջ է բերում համակարգային մարտահրավերներ, որոնք վերաբերում են կատարումների վերարտադրությանը, հանրությանը մատչելի դարձնելուն, տարածմանը և կատարողների այլ հիմնարար իրավունքների իրացմանը: Այս համատեքստում միջազգային պրակտիկայում առանձնահատուկ կարևորություն են ստանում մի կողմից դոկտրինալ, մյուս կողմից՝ դատարանների մեկնաբանությունները, որոնք ապահովում են որոշակի իրավական ուղենիշներ կատարողների իրավունքների մեկնաբանության ոլորտում: Հայաստանյան իրավական համակարգում կատարողների իրավունքների պաշտպանության վերաբերյալ դատական գործերը գրեթե բացակայում են, որը խորացնում է տեսական և կիրառական վերլուծության անհրաժեշտությունը և ավելի ընդգծում դոկտրինալ հետազոտությունների կարևորությունը:

Նշված իրողությունները ցույց են տալիս կատարումների կարգավորման և կատարողների իրավունքների բազմակողմանի ուսումնասիրության հրատապությունը հատկապես միջազգային կոնվենցիոն կարգավորումների և թվային դարաշրջանի զարգացումների համատեքստում: Այս պայմաններում անհրաժեշտ է ոչ միայն ձևակերպել թվային դարաշրջանի մարտահրավերներին համահունչ մեկնաբանություններ, այլև ապահովել քաղաքացիական շրջանառության մասնակիցների ու հասարակության շահերին համապատասխանող իրավական կանխատեսելիություն, որն էլ, արդեն իսկ նշված խնդիրների հետ, պայմանավորում է կատարողների իրավունքների համալիր ուսումնասիրության անհրաժեշտությունը, իմա՝ թեմայի արդիականությունը:

Յետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքերը:

Հայրենական իրավագիտության մեջ կատարումների իրավական կարգավորումն ու դրա տեսական և գործնական հիմնախնդիրները առանձին համալիր ուսումնասիրության առարկա չեն դարձել:

Անգլալեզու իրավական գրականության շրջանակում առկա են սահմանափակ թվով աշխատություններ, որոնք ամբողջական և համակարգային ձևով անդրադառնում են կատարումների իրավական կարգավորման հիմնախնդիրներին: Դրանց հեղինակներից առավել նշանակալիները Ռ. Արնոլդն ու Օ. Սորգանն են: Ռուսալեզու գիտական հանրույթում համալիր հետազոտություններով հանդես են եկել Ե. Յակուբովան և Ս. Կոկինան:

Միևնույն ժամանակ, հարակից իրավունքներին, այդ թվում՝ դրանցում ընդգրկված կատարողների իրավունքներին նվիրված առանձին ուսումնասիրություններ են հրապարակել Տ. Բարսեղյանը, Ա. Հայկյանցը, Ա. Հովհաննիսյանը, Կ. Իոնսարը, Օ. Ֆրոլովը, Մ. Գրունբերգը, Մ. Լեմլին, Պ. Մենելը, Թ. Մարգոնին, Ջ. Պիլան, Պ. Թոլերմանսը, Ջ. Գինգբուրգը, Լ. Բենթլին, Բ. Շերմանը, Գ. Մազգիտտին, Տ. Պետրիկը, Բ. Չևատին, Պ. Մեգեն, Ա. Պերժանովսկին, Չ. Շուլցը, Ա. Ռիգը, Ս. Կարապապան, Կ. Սգանգան և Է. Ռոզատին:

Այսպիսով, պետք է արձանագրել, որ նույնիսկ միջազգային գիտական պրակտիկայում կատարումների և կատարողների իրավունքների պաշտպանությանը նվիրված համալիր ուսումնասիրությունները շարունակում են մնալ սակավաթիվ:

Յետազոտության օբյեկտը և առարկան: Յետազոտության օբյեկտն են կատարումների հետ կապված հասարակական հարաբերությունները, իսկ առարկան՝ կատարումներին առնչվող կարգավորումները, պրակտիկայում արտահայտված դիրքորոշումները, դրանց կիրառության ընթացքում ծագող հիմնախնդիրները:

Յետազոտության նպատակը և խնդիրները: Յետազոտության նպատակն է բացահայտել կատարումների դերը մտավոր սեփականության

իրավունքի համակարգում, վերհանել դրանց կարգավորման հիմնախնդիրները և առաջարկել մեկնաբանություններ, որոնք համահունչ կլինեն գործող իրավական համակարգին և թվային դարաշրջանի իրողություններին ու առանձնահատկություններին:

Նշված նպատակին հասնելու համար հարկ է արձանագրել և ձևակերպել հետևյալ խնդիրները.

- բացահայտել կատարումների դերը մտավոր սեփականության համակարգում,

- ուսումնասիրել կատարումների և կատարողների իրավական պաշտպանության առանձնահատկությունները միջազգային կոնվենցիոն կարգավորումների լույսի ներքո,

- վերլուծել կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների կարգավորման առանձնահատկությունները,

- ուսումնասիրել կատարողներին վերապահված գույքային իրավունքների համակարգը, մասնավորապես **կատարման ամրագրումների վերաբարտադրության** և **հանրությանը հաղորդելու** իրավունքների մեկնաբանության համատեքստում,

- բացահայտել այն հիմնահարցերը, որոնք ի հայտ են գալիս կատարման ամրագրումների տարածման և **առաջին վաճառքի դոկտրինի** կիրառման գործընթացում՝ հաշվի առնելով թվային դարաշրջանի մարտահրավերները,

- վերլուծել կատարողների արդարացի վարձատրության և նրանց համապատասխան երաշխիքներ տրամադրելու հիմնախնդիրները,

- ներկայացնել առաջարկություններ, որոնք համահունչ կլինեն իրավակիրառ պրակտիկայի պահանջներին և միտված կլինեն վերհանված խնդիրների լուծմանը:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության նորմատիվ հիմքը կազմել են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը, «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ Օրենք): Բացի դրանից, ուսումնասիրության շրջանակում օգտագործվել են նաև օտարերկրյա պետությունների իրավական ակտեր, մասնավորապես՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների, Միացյալ Թագավորության, ինչպես նաև Եվրոպական Միության և դրա անդամ պետությունների (այդ թվում՝ Գերմանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի և այլ երկրների) կատարումների իրավական կարգավորմանը վերաբերող նորմատիվ աղբյուրներ:

Հետազոտության կարևոր բաղադրիչ են կազմել նաև Եվրոպական Միության Արդարադատության դատարանի նախադեպային որոշումները, ինչպես նաև մի շարք երկրների դատական պրակտիկան, որոնք նշանակալի

դեր ունեն կատարումների և կատարողների իրավունքների մեկնաբանության և կիրառման համատեքստում:

Յետագոտության ընդհանուր մեթոդաբանությունը: Յետագոտության մեթոդոլոգիական հիմքն են կազմել թե՛ ընդհանուր գիտական և թե՛ մասնավոր գիտական մեթոդները: Մասնավորապես, կիրառվել են ընդհանուր գիտական այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են ինդուկցիան, դեդուկցիան, անալիզը, սինթեզը, համակարգակառուցվածքային մեթոդը և այլն, ինչպես նաև մասնավոր գիտական՝ իրավահամեմատական, ձևական իրավաբանական, իրավական մոդելավորման և այլ մեթոդներ:

Յետագոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը այն է, որ հայրենական իրավագիտության մեջ առաջին անգամ համակողմանի ուսումնասիրության և վերլուծության առարկա են դառնում կատարումների կարգավորման և կատարողների իրավական պաշտպանության հիմնախնդիրները: Տեսական դիրքորոշումների, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա օրենսդրության, միջազգային իրավական ակտերի և դատական պրակտիկայի համադրված վերլուծության հիման վրա բացահայտվել է կատարումների դերը մտավոր սեփականության իրավունքի համակարգում, ներկայացվել են կատարողների գույքային և անձնական ոչ գույքային իրավունքների մեկնաբանության և կիրառման առանձնահատկությունները՝ համահունչ գործող իրավական համակարգի, միջազգային կոնվենցիոն կարգավորումների պահանջներին և թվային դարաշրջանի մարտահրավերներին:

Աշխատանքում առաջարկվել են տեսության և իրավակիրառ պրակտիկայի ընթացքում ի հայտ եկող խնդիրների լուծման նոր մոտեցումներ և կառուցակարգեր: Արդյունքում ձևակերպվել են ինչպես տեսական եզրահանգումներ, այնպես էլ օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկություններ:

Ատենախոսության գիտական նորույթը արտահայտված է պաշտպանության ներկայացվող դրույթներում և ամփոփված է եզրակացության մեջ հեղինակի կողմից կատարված տեսական ընդհանրացումներում ու գործնական առաջարկություններում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. Ատենախոսությունում համապարփակ ուսումնասիրությունն է կատարվում այն հարցի շուրջ, թե մտավոր սեփականության համակարգում կատարումները ինչ տեղ պետք է գրավեն: Առանձին մեծ ուսումնասիրությունն է կատարվել, թե արդյոք կատարումները կարող են ունենալ յուրօրինակության այն հատկանիշները, ինչ հեղինակային իրավունքի օբյեկտները, և արդյոք կատարումները պետք է պաշտպանվեն հեղինակային, թե՛ հարակից իրավունքներով:

Այս առումով ատենախոսությամբ հիմնավորվել է, որ կատարումները յուրօրինակ են և, անկասկած, ունեն ստեղծագործական բնույթ, սակայն միևնույն ժամանակ պետք է ընդգծել այն փաստը, որ դրանք օժտված են մի շարք էական առանձնահատկություններով, այդ թվում՝ կատարումների փոխկապվածությունը կատարման հիմքում ընկած գրական և գեղարվեստական ստեղծագործությունների հետ, որոնք անխուսափելիորեն առաջացնելու են կարգավորման տարբերություններ հեղինակային իրավունքի դասական օբյեկտների համեմատությամբ: Ուստի առաջարկվել է, որ կատարումները չպետք է դիտարկվեն հեղինակային իրավունքի համակարգում (բացառությամբ եզակի դեպքերի, երբ, օրինակ, կատարողի իմպրովիզները այն դարձրել են նաև հեղինակային իրավունքի օբյեկտ), այլ դրանք պետք է դիտարկվեն և նրանց պետք է պաշտպանություն ընձեռնվի ՅՅՀ-ի կոնվենցիայի, Կատարումների և հնչյունագրերի, Պեկինի պայմանագրերի հաստատված համակարգի շրջանակներում, այն է՝ կատարումները պետք է պաշտպանվեն հարակից իրավունքների շրջանակներում՝ սահմանելով կատարողների և կատարումների համար իրավունքների հստակ և յուրօրինակ շրջանակ:

2. Ատենախոսությունում առանձին ուշադրություն է հատկացվում կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների վերլուծությանը:

Այս առումով վերլուծությունները ցույց են տալիս, որ ՅՅ օրենսդրությամբ կատարողներին վերապահված իրավունքների շրջանակը չի համապատասխանում միջազգային պրակտիկայում առկա մոտեցումներին: Այսպես, ՅՅ օրենսդրությամբ կատարողների համար սահմանվում է իր անվան հիշատակման բացարձակ իրավունք, առանց հաշվի առնելու, որ մի շարք դեպքերում, օրինակ, երբ նվագախումբը բաղկացած է հարյուրավոր կատարողներից, զուտ գործնականում, անհնար է իրացնել կատարողի անվան հիշատակման իրավունքը:

Ուստի առաջարկվում է օրենսդրությամբ ամրագրել, որ կատարող ճանաչվելու իրավունքը, այդ թվում՝ իր անվան հիշատակման իրավունքը բացարձակ իրավունք չէ և կարող է որոշ դեպքերում սահմանափակվել՝ պայմանավորված կատարման օգտագործման բնույթով, պայմանով, որ դա անարդարացիորեն չի վնասում կատարողի շահերը:

Անդրադառնալով կատարողների պատմի և արժանապատվության իրավունքի պաշտպանությանը՝ ատենախոսությունում հիմնավորվում է, որ ՅՅ օրենսդրությունը պետք է որդեգրի համակցված մոտեցում՝ ներառելով ինչպես Կատարումների և հնչյունագրերի, այնպես էլ Պեկինի պայմանագրերով նախատեսված եզրույթաբանությունը: Այս համատեքստում առաջարկվում է, որ կատարողն իրավունք ունի առարկելու իր կատարման ցանկացած խեղաթյուրմանը, աղճատմանը, ձևափոխմանը, որոնք վնաս են հասցնում կամ կարող են վնաս հասցնել իր համբավին՝ հաշվի առնելով կատարման

բնույթը: Կատարողն իրավունք ունի նաև առարկել այլ գործողությունների, որոնք վնասում են կամ կարող են վնասել իր համբավը:

Ատենախոսության շրջանակում վերլուծվել է նաև առաջին իրապարակման և հետևանքի իրավունքը: Արձանագրվել է, որ ՀՀ օրենսդրությունը տվյալ անձնական ոչ գույքային իրավունքները չի նախատեսում կատարողների համար: Սակայն, հաշվի առնելով, որ այս իրավունքները վերապահված են հեղինակներին, ինչպես նաև այն հանգամանքը, որ կատարողին պետք է իրավունք վերապահել որոշել իր կատարումը իրապարակելու կամ չիրապարակելու հարցը, առաջարկվում է վերագրյալը վերապահել նաև կատարողներին: Մինևույն ժամանակ առաջարկվում է օրենսդրոտն ամրագրել, որ տվյալ իրավունքները բացարձակ չեն և կարող են սահմանափակվել այն դեպքերում, երբ դրանց իրականացումը կարող է հակասել մտավոր սեփականության այլ իրավատերերի օրինական շահերին:

3. Ատենախոսությամբ մանրամասն անդրադարձ է կատարվել կատարումների ամրագրումները հանրությանը հաղորդելու իրավունքի և դրա մեջ ներառվող՝ հանրությանը մատչելի դարձնելու մեկնաբանության և կիրառության հիմնախնդիրներին՝ հաշվի առնելով թվային դարաշրջանի առանձնահատկությունները: Մենք կարծում ենք, որ հանրությանը հաղորդելու իրավունքի մեկնաբանության ժամանակ հայկական իրավակիրառ պրակտիկան պետք է ամեն անգամ գնահատի հետևյալ հարցերը.

Ա. Արդյոք կատարումները հաղորդվել են անձանց անորոշ շրջանակին, թե ոչ: Կարծում ենք՝ անձանց անորոշ շրջանակի մեկնաբանության համար պետք է առաջնորդող լինի Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից տրված ձևակերպումը, ըստ որի՝ անորոշ շրջանակը ենթադրում է աշխատանքը հասանելի դարձնել այնպիսի անձանց շրջանակին, որը սահմանափակված չէ որոշակի մասնավոր խմբին պատկանող յուրահատուկ անհատներով, և ովքեր չեն պատկանում ընտանիքի կամ մտերիմների սովորական շրջանակին:

Բ. Գնահատման ենթակա հաջորդ չափանիշը պետք է լինի այն, թե արդյոք կատարումը հանրությանը հաղորդելը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե ոչ:

Գ. Երրորդ չափանիշը, որը պետք է գնահատման ենթարկվի այն է, թե արդյոք հանրությունը, որին հասանելի են դարձվել կատարումները, հնարավորություն ունենալով եղանակով հասանելիությունն ստանալ կատարմանը, թե ոչ:

Վերագրյալ վերլուծությունների լույսի ներքո առաջարկվում է Օրենքի 45-րդ հոդվածում կատարել համապատասխան փոփոխություններ՝ ամրագրելով կատարումների հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի գնահատման չափանիշները:

4. Հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի ներքո ատենախոսությամբ քննարկվել է նաև կատարման ամրագրումների հիպերլինքերի (հիպերհղում) տեղադրումը համացանցում: Այս կապակցությամբ մենք եկել ենք այն եզրահանգման, որ կատարման ամրագրումը հանրությանը մատչելի դարձնելու եղանակ կարող է դիտարկվել նաև հիպերլինքերի տեղադրումը համացանցում, որոնց պարագայում, ի թիվս վերոգրյալի, պետք է գնահատել, թե՞

Ա. Արդյոք տեղադրվել է համացանցում արդեն իսկ ազատորեն հասանելի կատարման ամրագրման հիպերհղում, թե ոչ:

Բ. Այն դեպքերում, երբ տեղադրվել է նախկինում չհաղորդված կատարմանը հիպերհղում, պետք է գնահատման ենթարկել հղումը տեղադրողի ողջամիտ իմացության չափանիշը՝ թե արդյոք նա գիտեր, որ տեղադրում է այնպիսի հիպերհղում, որը հասանելիություն է ապահովում նախկինում հանրությանը չհաղորդված կատարմանը:

Գ. Արդյոք հիպերհղման տեղադրումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե այլ նպատակներով:

Դ. Արդյոք իրավատերը կիրառել է արդյունավետ պաշտպանության միջոցներ հիպերհղումների տեղադրումը կանխելու համար:

Ուստի առաջարկվում է Օրենքում ամրագրել վերոգրյալ չափանիշները, որոնք թույլ կտան գնահատել, թե արդյոք կատարման ամրագրման հիպերլինքի տեղադրումը պետք է որակել որպես հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի իրացում, թե ոչ:

5. Ատենախոսության մեջ ուսումնասիրության առանձին մաս նվիրված է կատարման ամրագրումների նկատմամբ տարածման իրավունքին և առաջին վաճառքի դոկտրինին: Առաջին վաճառքի դոկտրինը կամ սպառման իրավունքը ենթադրում է, որ կատարողները պարտավոր են հանդուրժել իրենց պաշտպանության ենթակա օբյեկտների կամ դրանց օրինակների հետագա տարածումը, այդ թվում՝ շահույթի ստացման նպատակով, այն դեպքում, երբ այդ օրինակները շրջանառության մեջ են դրվել նրանց համաձայնությամբ՝ վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ եղանակով:

Թվային դարաշրջանում առաջին վաճառքի դոկտրինը ստանում է մեկնաբանության նոր երանգներ: Ատենախոսության շրջանակում այն ուսումնասիրվում է արդի իրավական իրողությունների համատեքստում՝ մասնավորապես ԱՄՆ և ԵՄ նախադեպային իրավակիրառ պրակտիկայի վերլուծության միջոցով:

Անդրադառնալով հայաստանյան իրականությանը՝ թեև Օրենքի 45-րդ հոդվածը հստակորեն սահմանում է առաջին վաճառքի դոկտրինը, սակայն հայկական իրավական պրակտիկան որևէ կերպ չի անդրադարձել **թվային միջավայրում սպառման իրավունքի** մեկնաբանությանը: Ուստի եզրահանգում է արվել, որ մեր իրավական համակարգում մեկնաբանությունը

պետք է լինի այնպիսին, որ կատարումների թվային ամրագրումների նկատմամբ չպետք է կիրառվի առաջին վաճառքի դոկտրինը, քանի որ սպառման իրավունքը պետք է կիրառելի լինի միայն շրջափելի կրիչների վրա ամրագրված կատարումների նկատմամբ: Հակառակ մեկնաբանության պարագայում կատարողները կարող են հայտնվել խիստ անբարենպաստ իրավիճակում: Բանն այն է, որ թվային դարաշրջանում հնարավոր է ռոպեների ընթացում ստանալ կատարման ամրագրումների հազարավոր օրինակներ, իսկ թվային սպառման իրավունքի պարագայում կատարողները գրեթե զրկված կլինեն այդ օրինակների շրջանառության նկատմամբ վերահսկողությունից: Ուստի հետագա տարամեկնաբանություններից խուսափելու համար առաջարկվում է օրենսդրությամբ հստակորեն ամրագրել թվային սպառման իրավունքի արգելքը: Այսպես, առաջարկվում է Օրենքի 45-րդ հոդվածի 4-րդ մասը խմբագրել հետևյալ կերպ. «4. Եթե կատարումների՝ նյութական շրջափելի կրիչների վրա ամրագրված օրինակները քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել վաճառքի կամ սեփականության իրավունքի փոխանցման այլ ձևով, ապա դրանց հետագա տարածումը, այդ թվում՝ ներմուծումը, իրականացվում է առանց կատարողի համաձայնության և վարձատրության: Սույն դրույթը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ կատարումների օրինակները ամրագրված են ոչ նյութական կրիչների վրա և քաղաքացիական շրջանառության մեջ են դրվել, այդ թվում՝ համացանցային հարթակների և էլեկտրոնային այլ միջոցների օգտագործմամբ:»:

6. Ատենախոսությունը եզրափակվում է կատարողների արդարացի վարձատրության իրավունքի հետազոտությամբ: Ատենախոսությամբ փաստվում է, որ ՀՀ գործող օրենսդրությունը չի նախատեսում երաշխիքներ կատարողների արդարացի վարձատրության իրավունքի ապահովման համար: Ուստի, հաշվի առնելով կատարողների համար ստեղծված անբարենպաստ պայմանները, ինչպես նաև միջազգային պրակտիկայում վերջին զարգացումները՝ առաջարկվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանել մանրամասն կարգավորումներ կատարողների արդարացի վարձատրության վերաբերյալ: Մասնավորապես՝

Ա. Տեխնոլոգիական զարգացման արդի պայմաններում և օրեցօր աճող սթրիմինգային ծառայությունների հաշվառմամբ՝ անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ ամրագրել, որ կատարողը պահպանում է վարձատրություն ստանալու իրավունքը ոչ միայն վարձույթով տալու համար, այլ նաև առցանց եղանակով կատարումը հանրությանը մատչելի դարձնելու դեպքում:

Բ. Հաշվի առնելով, որ Օրենքը չի բացահայտում արդարացի վարձատրության հաշվարկման որևէ մեխանիզմ, առաջարկվում է սահմանել մանրամասն կարգավորումներ կատարողների վարձատրության հաշվարկման համար: Այսպես՝

Անհրաժեշտ է սահմանել, որ կատարողները ունեն արդարացի վարձատրության իրավունք, և միանվագ վարձատրության իրավունքը կիրառվում է միայն բացառիկ դեպքերում՝ երկու պայմանների համաժամանակյա առկայության դեպքում, երբ կատարողների դերը կատարման ժամանակ կրում է օժանդակ բնույթ, ինչպես նաև երբ կատարման օգտագործումից ստացված հասույթը կամ ծախսերը չեն կարող ճշգրիտ որոշվել, և (կամ) երբ այդ հասույթի որոշումը կպահանջի ոչ ողջամիտ ծախսեր:

Գ. Անհրաժեշտ է նաև նախատեսել **լավագույն վաճառքի դրույթը**՝ ամրագրելով, որ անկախ կողմերի միջև կնքված պայմանագրի դրույթներից և այն հանգամանքից, թե արդյոք կողմերը ի սկզբանե հաշվարկել էին կամ կարող էին հաշվարկել վերջնական վճարները, կատարողները իրավունք ունեն պահանջելու լրացուցիչ, համապատասխան և արդարացի վարձատրություն, երբ համաձայնեցված վարձատրությունը անհամամասնորեն ցածր է նույնաման աշխատանքների և կատարումների օգտագործման համար վճարվող վարձատրությունից:

Դ. Առաջարկվում է նաև նախատեսել հստակ մեխանիզմներ կատարողների վարձատրության թափանցիկության ապահովման համար՝ ամրագրելով, որ կատարողները և հեղինակները պարբերաբար՝ նվագագույնը երկու տարին մեկ անգամ, անհրաժեշտ և ամբողջական տեղեկություն պետք ստանան իրենց կատարումների օգտագործման վերաբերյալ այն անձանցից, որոնց տրամադրել են լիցենզիա կամ փոխանցել են իրենց իրավունքները՝ կատարման օգտագործման ձևերի, դրանց ընթացքում գոյացած եկամուտների և դրանց հիման վրա վճարվող հատուցումների վերաբերյալ:

Ե. Կատարողներին անհրաժեշտ է նաև վերապահել չեղարկման իրավունք՝ ամրագրելով, որ նրանք կարող են ամբողջությամբ կամ մասամբ չեղարկել իրենց կողմից տրամադրված լիցենզիաները կամ իրավունքի փոխանցումը այն դեպքերում, երբ կատարումները չեն օգտագործվում: Սակայն, եթե կատարումները ընդգրկում են մի քանի կատարողների ներդրումը, իրավունքները չեղարկելիս անհրաժեշտ է հաշվի առնել այլ կատարողների շահերը ևս:

Յետագոտության տեսական և գործնական նշանակությունը: Յետագոտության տեսական նշանակությունը մտավոր սեփականության համակարգում կատարումների դերի համալիր և խոր վերլուծությունն է, դրանց կարգավորման զարգացման հիմնական միտումները վեր հանելն ու այնպիսի մեկնաբանություններ առաջարկելը, որոնք ապահովում են կատարողների իրավունքների առավել համապարփակ կարգավորում՝ քաղաքացիական շրջանառության պահանջներին և մտավոր սեփականության իրավունքի համակարգում կատարումների տեղին ու դերակատարությունը համահունչ:

Ատենախոսությունում ներկայացված վերլուծությունները, մեկնաբանությունները, եզրահանգումները և դրանց հիման վրա արված առաջարկությունները կարող են կարևոր նշանակություն ունենալ քաղաքացիական

իրավունքի գիտության, հատկապես մտավոր սեփականության իրավունքի գիտության զարգացման համար: Ատենախոսությունում արված եզրահանգումները կարող են օգտագործվել ինչպես կատարումներին, այնպես էլ ավելի լայն առումով հեղինակային և հարակից իրավունքներին նվիրված հետագա ուսումնասիրություններում, քննարկումներում, ուսումնական գործընթացում, կիրառվել իրավաստեղծ գործունեության մեջ՝ օրենսդրության կատարելագործման և դրանում առկա բացերի, թերությունների ու հակասությունների վերացման նպատակով, ինչպես նաև իրավակիրառ գործունեության մեջ՝ միասնական, կանխատեսելի և հակասություններից զերծ դատական պրակտիկա ձևավորելու համար:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է Երևանի պետական համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնում: Հետազոտության արդյունքներն ամփոփված են հեղինակի գիտական հոդվածներում: Ատենախոսության մի շարք դրույթներ հեղինակի կողմից ներկայացվել են գիտական զեկույցների շրջանակներում:

Աշխատանքի կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, դրանցում ընդգրկված ութ պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի, գրականության և պրակտիկայի նյութերի ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ներկայացվել են հետազոտության նպատակը և խնդիրները, օբյեկտը և առարկան, մշակվածության աստիճանը, ընդհանուր մեթոդաբանությունը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության արդյունքների փորձարկումը և աշխատանքի կառուցվածքը:

Ատենախոսության **«Կատարումները մտավոր սեփականության իրավունքի համակարգում»** վերտառությամբ 1-ին գլխի **«Կատարումների իրավական կարգավորման և կատարողների իրավունքների պաշտպանության Եվրոյուզիան»** վերտառությամբ 1-ին պարագրաֆը ներածական բնույթ է կրում և ներկայացնում է կատարողների իրավունքների պաշտպանության Եվրոյուզիան՝ կատարողների իրավունքների պաշտպանության իսպառ բացակայությունից մինչև այդ իրավունքների միջազգային ճանաչումն ու ամրագրումը ազգային օրենսդրություններում:

Ատենախոսության 1-ին գլխի **««Կատարում» և «կատարող» հասկացությունները»** վերտառությամբ 2-րդ պարագրաֆում ներկայացվել և վերլուծվել են «կատարում» և «կատարող» հասկացությունների հիմնական

հատկանիշները, տեսական գրականությունում, միջազգային փաստաթղթերում և օտարերկրյա պետություններում առկա մոտեցումները: Կատարված ընդհանրացումների հիման վրա պարագրաֆում ձևակերպվել են «կատարում» և «կատարող» հասկացությունների սահմանումները:

«Կատարումները մտավոր սեփականության իրավունքի համակարգում» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում քննարկվել է այն հարցը, թե կատարումները մտավոր սեփականության իրավունքի համակարգում ինչ տեղ պետք է զբաղեցնեն, այն է՝ պաշտպանվեն հեղինակային իրավունքի, թե հարակից իրավունքների շրջանակում: Այս համատեքստում վերլուծությունները սկսվել են մտավոր սեփականության իրավափիլիսոփայական տեսությունների համատեքստում՝ քննարկելով աշխատանքի, անհատականության և տնտեսական խթանների տեսությունները: Եզրահանգվել է, որ բոլոր տեսությունները հիմնավորում են կատարողների իրավունքների պաշտպանությունը մտավոր սեփականության համակարգում: Բացի դրանից, քննարկվել է այն հարցը, թե արդյոք կատարումները պետք է պաշտպանվեն հեղինակային իրավունքի, թե հարակից իրավունքների շրջանակում: Նշված հարցերին պատասխանելու համար ներկայացվել են ստեղծագործության յուրօրինակության վերաբերյալ միջազգային իրավական պրակտիկան և դատական նախադեպերը: Իրականացված հետազոտության արդյունքներով եզրահանգվել է, որ կատարումները յուրօրինակ են և ունեն ստեղծագործական բնույթ, սակայն դրանք օժտված են մի շարք էական առանձնահատկություններով, որոնք անխուսափելիորեն առաջացնում են կարգավորման տարբերություններ հեղինակային իրավունքի դասական օբյեկտների համեմատությամբ: Ուստի առաջարկվել է, որ կատարումները չպետք է դիտարկվեն հեղինակային իրավունքի համակարգում, այլ պաշտպանվեն հարակից իրավունքների շրջանակում:

Ատենախոսության «Կատարողի իրավունքների բովանդակությունը և տեսակները. կատարողի անձնական ոչ գույքային և գույքային իրավունքները» վերտառությամբ 2-րդ գլխի «Կատարողների իրավունքների միջազգային իրավական շրջանակը» վերտառությամբ 1-ին պարագրաֆն ունի ներածական և նկարագրական նշանակություն և ներկայացնում է կատարողներին վերապահված իրավունքների հիմնական շրջանակն ըստ Հռոմի կոնվենցիայի, Կատարումների և հնչյունագրերի պայմանագրի և Պեկինի պայմանագրի:

Աշխատանքի 2-րդ գլխի «Կատարողների անձնական ոչ գույքային իրավունքները» վերտառությամբ 2-րդ պարագրաֆում ներկայացված են կատարողների հիմնական ոչ գույքային իրավունքները՝ կատարող ճանաչվելու և կատարումները հնարավոր խեղաթյուրումներից պաշտպանելու իրավունքները: Նշված իրավունքների մեկնաբանման համար ներկայացվում են մի-

ջազգային փաստաթղթերում և տեսական գրականությունում առկա մոտեցումները: Առանձին ուսումնասիրության են ենթարկվում նաև կատարման հրապարակման և հետկանչի իրավունքները: Թեև ներկայումս այս իրավունքները հայրենական օրենսդրությամբ նախատեսված չեն որպես կատարողի ոչ գույքային իրավունքներ, կատարված վերլուծությունների հիման վրա առաջարկվում է դրանք ևս նախատեսել կատարողների համար:

Աշխատանքի 2-րդ գլխի «*Կատարողների գույքային իրավունքների ճարտարապետությունը. ամրագրում, վերարտադրություն, հանրությանը հաղորդում, վարձույթ, փոխատվություն*» վերտառությամբ 3-րդ պարագրաֆում ուսումնասիրվել են կատարողներին վերապահված հիմնական գույքային իրավունքները՝ ամրագրման, վերարտադրության, հանրությանը հաղորդման, վարձույթի և փոխատվության իրավունքները: Նշված իրավունքների ուսումնասիրության համար ներկայացվել են միջազգային պրակտիկայում առկա մոտեցումները, մասնավորապես Արդարադատության Եվրոպական դատարանի նախադեպային պրակտիկան: Կատարված ուսումնասիրությունների և ընդհանրացումների հիման վրա հետազոտությամբ տրվել են վերարտադրման իրավունքի մանրամասն մեկնաբանություններ: Կատարվել է նաև լայնածավալ ուսումնասիրություն կատարումների ամրագրումները հանրությանը հաղորդելու իրավունքի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրությանը հաղորդելու իրավունքը ընդարձակ իրավունք է և ներառում է նաև հանրությանը մատչելի դարձնելու իրավունքը, ներկայացվել են դրա մեկնաբանման կանոնները՝ միջազգային պրակտիկայում առկա մոտեցումների և թվային դարաշրջանի առանձնահատկությունների հաշվառմամբ: Կատարված հետազոտությամբ առաջարկվել է Օրենքում կատարել փոփոխություններ՝ ամրագրելով ուղեցուցային կանոններ կատարումների ամրագրումները հանրությանը մատչելի դարձնելու իրավունքի մեկնաբանման համար:

Աշխատանքի «**Կատարողի իրավունքների և օրինական շահերի հավասարակշռման որոշ առանձնահատկություններ. Առաջին վաճառքի դոկտրինը (սպառման իրավունք) և կատարողի արդարացի վարձատրության իրավունքը թվային դարաշրջանում**» վերտառությամբ 3-րդ գլխի՝ «*Կատարման ամրագրումների նկատմամբ տարածելու իրավունքը և առաջին վաճառքի դոկտրինը թվային դարաշրջանում*» վերտառությամբ 1-ին պարագրաֆում ներկայացվել են առաջին վաճառքի դոկտրինի կամ սպառման իրավունքի հիմնական բնութագիրը և առանձնահատկությունները՝ միջազգային պրակտիկայի լույսի ներքո: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով թվային դարաշրջանի առանձնահատկությունները, ատենախոսությունում քննարկվում է թվային սպառման իրավունքի կիրառելիության հնարավորությունը՝ դատական պրակտիկայում առկա մոտեցումների հաշվառ-

մամբ: Այս առումով մանրամասն վերլուծության են ենթարկվում ԱՄՆ դատարաններում և Արդարադատության Եվրոպական դատարանում ձևավորված մոտեցումները: Վերլուծությունների արդյունքում եզրահանգվել է, որ կատարումների թվային ամրագրումների նկատմամբ չպետք է կիրառվի առաջին վաճառքի դոկտրինը, քանի որ սպառման իրավունքը պետք է կիրառելի լինի միայն շոշափելի կրիչների վրա ամրագրված կատարումների նկատմամբ:

Աշխատանքի 3-րդ գլխի «Կատարողի արդարացի վարձատրության իրավունքը» վերտառությամբ պարագրաֆը ներկայացնում է կատարողի արդարացի վարձատրության իրավունքի առանձնահատկությունները: Առանձին ուշադրություն է դարձվում այս ոլորտում առկա վերջին զարգացումներին, հատկապես ԵՄ-ում և դրա անդամ պետություններում կատարողների արդարացի վարձատրության իրավունքի վերաբերյալ գործող օրենսդրական կարգավորումներին: Առանձնահատուկ անդրադարձ է կատարվում կատարողների վարձատրության մեխանիզմներին, այդ թվում՝ մնացորդային վարձատրության իրավունքին, ինչպես նաև կատարողների արդարացի վարձատրության հիմքում ընկած այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են լավագույն վաճառքի իրավունքը, վճարման թափանցիկությունը և չեղարկման իրավունքը: Կատարված հետազոտությունների լույսի ներքո առաջարկվել է օրենքում կատարել համապատասխան փոփոխություններ, որոնք կապահովեն կատարողի արդարացի վարձատրությունը:

Ատենախոսության **եզրակացությունում**, ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումները:

1. Ատենախոսությունը վեր է հանել «կատարում» և «կատարող» հասկացությունների ինչպես միջազգային իրավական եզրաբանությունը, այնպես էլ տեսական աղբյուրներում օգտագործվող հասկացությունները: Հետազոտությունը կատարումները ձևակերպելու համար առանձնացնում է չորս հիմնական հատկանիշ՝ ա) կատարման գործողություն լինելը, բ) անհատի կամ անհատների խմբի կողմից կատարելը, գ) կատարումը այլոց ներկայությամբ կատարելը և դ) Բեռնի կոնվենցիայով պաշտպանվող օբյեկտները կատարելը:

2. Ատենախոսության շրջանակներում քննարկվել է նաև արհեստական բանականության համակարգերը որպես կատարող դիտարկելու հարցը և արվել է եզրահանգում, որ արհեստական բանականության համակարգերը չպետք է դիտարկվեն որպես կատարող: Արհեստական բանականության միջոցով ստեղծված ստեղծագործությունների, ինչպես նաև կատարումների համար անհրաժեշտ է ներմուծել նոր իրավունքների (sui generis) շրջանակ, որոնք կհաշվառեն արհեստական բանականության բոլոր առանձնահատկությունները:

3. Ատենախոսության մեջ քննարկվում են նաև մարզիկներին կատարող դիտարկելու հիմնախնդիրները: Կատարվում է տարանջատում գեղարվեստական (գեղասահք, գեղալող, գեղարվեստական մարմնամարզություն, ջրացատկ և այլն) և ոչ գեղարվեստական սպորտաձևերի միջև: Այս առնչությամբ կարծում ենք, որ գեղարվեստական սպորտաձևերի դեպքում, այսինքն՝ այն սպորտաձևերի, որոնց պարագայում մարզիկի հաջողությունը պայմանավորված է ոչ միայն նրա տեխնիկական պատրաստվածության մակարդակով, այլև յուրօրինակ և արտահայտիչ գեղարվեստական լուծումներ առաջարկելու կարողությամբ, կարելի է դիտարկել մարզիկներին իրավական պաշտպանություն տրամադրելու հարցը և նրանց որպես կատարող ճանաչելը:

4. Հիմնվելով կատարման վերոհիշյալ հատկանիշների վրա՝ առաջարկվում է կատարողների հետևյալ սահմանումը.

«Կատարում է համարվում դերասանի, երգչի, երաժշտի, պարողի, դիրիժորի, խմբավարի կամ այլ ֆիզիկական անձի գործողությունը, որի միջոցով վերջիններս դերակատարում, երգում, ասումուքում, ներկայացնում կամ այլ ձևով կատարում կամ մեկնաբանում են գրական կամ գեղարվեստական ստեղծագործություն (այդ թվում՝ կատարմանը զուգընթաց ստեղծվող ստեղծագործությունները), ինչպես նաև ֆուլկլորի ստեղծագործություններ: Կատարողներ են համարվում դերասանները, երգիչները, երաժիշտները, պարողները, դիրիժորները, խմբավարները և այլ ֆիզիկական անձինք, որոնք դեր են կատարում, երգում են, արտասանում, նվագում կամ այլ ձևով կատարում են կամ մեկնաբանում գրական կամ գեղարվեստական ստեղծագործություններ, կրկեսային, տիկնիկային, վարիետի, ակրոբատիկ, էստրադային և համանման այլ ներկայացումներ, ինչպես նաև այլ ստեղծագործություններ: Կատարողներ են նաև նվագախմբի, երգչախմբի դիրիժորները, խմբավարները, հնչյունային ռեժիսորները:»:

5. Ատենախոսությունում առանձին ուշադրություն է հատկացվում կատարողների անձնական ոչ գույքային իրավունքների վերլուծությանը: Կատարված վերլուծությունների լույսի ներքո առաջարկվում է Օրենքի 44-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 44. Կատարողի անձնական ոչ գույքային իրավունքները

1. Կատարողին են պատկանում իր կատարման նկատմամբ հետևյալ անձնական ոչ գույքային իրավունքները՝

ա) կատարող ճանաչվելու իրավունքը,

բ) կատարումը հնարավոր աղավաղումներից, ինչպես նաև կատարողի համբավին կամ արժանապատվությանը վնաս հասցնող այլ ոտնձգություններից պաշտպանելու իրավունքը,

գ) կատարման ամրագրումը ցանկացած ձևով առաջին անգամ իրապարակելու կամ այդ իրավունքը այլ անձի վերապահելու իրավունքը (իրապարակման իրավունք),

դ) կատարման ամրագրումը հրապարակելու մասին նախկինում ընդունած որոշումից հրաժարվելու իրավունքը (հետկանչի իրավունք):

2. Կատարող ճանաչվելու իրավունքը, այդ թվում՝ կատարողի անվան հիշատակման իրավունքը, կարող է սահմանափակվել՝ պայմանավորված կատարման օգտագործման բնույթով, պայմանով, որ դա անարդարացիորեն չի վնասում կատարողի շահերը:

3. Կատարողն իրավունքն ունի առարկելու իր կատարման ցանկացած խեղաթյուրման, աղճատման կամ ձևափոխման դեմ, որոնք վնաս են հասցնում կամ կարող են վնաս հասցնել նրա համբավին՝ հաշվի առնելով կատարման բնույթը: Կատարողը իրավունք ունի նաև առարկելու այլ գործողությունների դեմ, որոնք վնաս են հասցնում կամ կարող են վնասել նրա համբավին:

4. Կատարողը կարող է հրաժարվել կատարման ամրագրումը հրապարակելու մասին նախկինում ընդունած որոշումից (հետկանչի իրավունք), եթե հրապարակվող կատարումը այլևս չի համապատասխանում իր համոզմունքներին և այդ հրապարակումը կարող է բացասական ազդեցություն ունենալ նրա հեղինակության վրա՝ պայմանով, որ կատարողը հատուցի կատարումը օգտագործելու իրավունք ունեցող անձանց պատճառած վնասները (ներառյալ՝ բաց թողնված օգուտը): Եթե կատարման ամրագրումը արդեն իսկ հրապարակվել է, կատարողը պարտավոր է հրապարակայնորեն ծանուցել դրա հետկանչի մասին: Այս պարագայում նա իրավունք ունի շրջանառությունից հանել կատարման ամրագրումների նախկինում պատրաստված օրինակները՝ հոգավոր անհրաժեշտ ծախսերը: Սույն մասի դրույթները չեն տարածվում տեսալսողական ստեղծագործությունների, ինչպես նաև ծառայողական ստեղծագործությունների վրա, եթե կատարողի և տեսալսողական ստեղծագործության ամրագրումն արտադրողի, ինչպես նաև կատարողի և գործատուի միջև կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

5. Կատարողի անձնական ոչ գույքային իրավունքներն անօտարելի և անփոխանցելի են և պահպանվում են անժամկետ, բացառությամբ հետկանչի իրավունքի, որը գործում է միայն կատարողի կյանքի ընթացքում:»:

6. Ատենախոսության շրջանակում մեծ ուշադրություն է դարձվել կատարողների գույքային իրավունքների պաշտպանության և ձևակերպման հիմնախնդիրներին: Հիմնվելով միջազգային կոնվենցիոն կարգավորումների և պրակտիկայի վրա՝ եզրահանգվում է, որ կատարողների գույքային իրավունքների ծավալը հիմնականում հանգում է հետևյալ բացառիկ իրավունքներին՝ 1) չամրագրված կատարումների ամրագրումը թույլատրելու իրավունք, 2) չամրագրված և ամրագրված կատարումների հանրությանը հաղորդելու, հեռարձակման և հանրությանը մատչելի դարձնելու իրավունք, 3) ամրագրված կատարումների վերարտադրության իրավունք, 4) ամրագրված կատարումների տարածման իրավունք, 5) ամրագրված կատարումների

վարձույթով տալու իրավունք, 6) կատարողների արդարացի վարձատրության իրավունք:

7. Առանձին անդրադարձ է կատարվում կատարողի ամենահիմնաքարային իրավունքի՝ կատարման ամրագրման վերարտադրության իրավունքի մեկնաբանության խնդիրներին՝ հատկապես հաշվի առնելով թվային դարաշրջանի առանձնահատկությունները: Այս համատեքստում անորոշարձ է կատարվում ամրագրումների վերարտադրության ժամանակավոր և կարճատև դեպքերին, որոնց համար անհրաժեշտ չէ իրավատիրոջ համաձայնությունը: Հիմք ընդունելով Արդարադատության Եվրոպական դատարանի մեկնաբանությունները՝ առանձնացվում է վերարտադրության իրավունքի համար բացառություն հետևյալ դեպքերի համար:

- Վերարտադրությունը պետք է լինի տեխնոլոգիական գործընթացի անհրաժեշտ և անքակտելի մաս:

- Վերարտադրության ընթացքում ստեղծված օրինակները պետք է լինեն ժամանակավոր, որ մեկնաբանվում է այնպես, որ օրինակների ստեղծումը պետք է լինի դիպվածային և հազվադեպ, տեխնոլոգիական գործընթացի էական և անքակտելի մաս: Ինչը նշանակում է, որ հեղինակային իրավունքով պաշտպանվող օբյեկտի պահպանումը և ոչնչացումը պետք է լինի ավտոմատ և կախված չլինի մարդու հետագա միջամտությունից: Օրինակների պահպանումը պետք է լինի այնքան, որքան անհրաժեշտ է համապատասխան տեխնոլոգիական գործընթացն ավարտելու համար:

- Նշված բացառությունը վերաբերելի է նաև այն դեպքերին, երբ վերարտադրման օրինակները կատարվում են միջնորդների միջոցով՝ ցանցում կյուբի փոխանցման համար:

- Միայն այն փաստը, որ բացակայում է իրավատերերի թույլտվությունը, օգտագործումը մեխանիկորեն չի դարձնում ոչ իրավաչափ:

- Օրինակների ստեղծումը չպետք է ունենա ինքնուրույն տնտեսական նշանակություն:

Անդրադառնալով ՀՀ կարգավորումներին՝ եզրահանգվում է, որ ներկայիս Օրենքի 22-րդ հոդվածը, նվիրված վերարտադրության կարճատև և ժամանակավոր դեպքերին, լիովին համահունչ է ԵՄ Դիրեկտիվով ամրագրված մոտեցումներին և արտացոլում է Դիրեկտիվի եզրույթաբանությունը: Այս համատեքստում, հետազոտությունում ներկայացված մեկնաբանության կանոնները կարող են լիարժեքորեն կիրառվել նաև հայկական իրավակիրառ պրակտիկայում:

8. Ատենախոսությունը միասնության մեջ ուսումնասիրում է նաև Կատարումները հրապարակային հաղորդելու, հեռարձակելու և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները՝ հաշվի առնելով դրանց փոխկապակցվածությունը: Մենք ելնում ենք այն հիմնակետից, որ *հանրությանը հաղորդելու*

իրավունքը լայն իրավունք է, որն իր մեջ ընդգրկում է հեռարձակման և հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները՝ հիմնվելով Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության սահմանման վրա: Ուստի այս իրավունքների մեկնաբանման ընթացքում պետք է հաշվի առնել դրանց փոխկապակցվածությանը և ելնել մեկնաբանման միևնույն հիմնակետերից: Ավելին, հետազոտության շրջանակում որպես հիմք ընդունվում է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության կողմից ամրագրված համապարփակ և համընդգրկուն հասկացությունը, այն է՝ հանրությանը հաղորդելու իրավունքը կիրառվում է Բեռնի կոնվենցիայով, և նշանակում է հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների օբյեկտների պատկերների կամ հնչյունների, կամ դրանց երկուսի հաղորդումը հաղորդալարով կամ առանց դրա, որը թույլ է տալիս այդ պատկերները և/կամ հնչյունները ընկալել այն անձանց կողմից, ովքեր չեն պատկանում ընտանիքի կամ մտերիմների սովորական շրջանակին, այնպիսի վայրում կամ վայրերում, որոնք հեռու են հաղորդումը սկսելու սկզբնական վայրից, և առանց նման հաղորդման պատկերները և/կամ հնչյունները հասանելի չեին լինի հաղորդման վայրում կամ վայրերում՝ անկախ այն բանից, թե վերոգրյալ անձինք կարող էին ընկալել այդ պատկերները և հնչյունները միաժամանակ նույն վայրում, թե տարբեր ժամանակ՝ տարբեր վայրերում:

9. Համալիր ուսումնասիրության առարկա է դարձվել նաև կատարումների ամրագրումները հանրությանը հաղորդելու իրավունքի և դրա մեջ ներառվող՝ հանրությանը մատչելի դարձնելու մեկնաբանության և կիրառության հիմնախնդիրները՝ թվային դարաշրջանի և հատկապես համացանցի առանձնահատկությունների հաշվառմամբ: Հաշվի առնելով գործնականում նշված իրավունքների մեկնաբանության խթանությունը՝ առաջարկվում է Օրենքի 45-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-ին և 5.2-րդ մասերով.

«5.1. Գործողությունը որպես կատարման ամրագրումը հանրությանը մատչելի դարձնել որակելու համար պետք է գնահատել՝

ա) այն անձանց շրջանակը, ում մատչելի է դարձվել կատարման ամրագրումը՝ հաշվի առնելով, թե արդյոք այն հաղորդվել է նոր հանրությանը,

բ) հանրությանը մատչելի դարձնելը տեղի է ունեցել շահույթ ստանալու, թե այլ նպատակներով,

գ) այն հանրությունը, որին հասանելի է դարձվել կատարման ամրագրումը, հնարավորություն ուներ այլ եղանակով ստանալու հասանելիություն դրան:

5.2. Կատարման ամրագրումների հիպերհղումների տեղադրումը կայքերում կարող է համարվել կատարման ամրագրումը հանրությանը մատչելի

դարձնել: Հիպերիզման տեղադրումը որպես կատարման ամրագրումը հանրությանը մատչելի դարձնել որակելու համար պետք է գնահատվեն՝

ա) արդյոք տեղադրվել է համացանցում արդեն իսկ ազատորեն հասանելի կատարման ամրագրումը հիպերիզումը, թե ոչ: Եթե տեղադրվել է արդեն իսկ ազատորեն հասանելի կատարման ամրագրման հիպերիզում, ապա հիպերիզման տեղադրումը չի դիտարկվի որպես կատարողի՝ հանրությանը հաղորդելու իրավունքի խախտում,

բ) այն դեպքերում, երբ տեղադրվել է նախկինում չհաղորդված կատարմանը հիպերիզում, պետք է գնահատման ենթարկել հղումը տեղադրողի ողջամիտ իմացության չափանիշը՝ թե արդյոք նա գիտեր, որ տեղադրում է այնպիսի հիպերիզում, որը հասանելիություն է ապահովում նախկինում հանրությանը չհաղորդված կատարմանը,

գ) արդյոք հիպերիզման տեղադրումը տեղի է ունեցել շահույթ ստանալու նպատակով, թե այլ նպատակներով,

դ) արդյոք իրավատերը տեխնիկական պաշտպանության միջոցներ է ձեռնարկել հիպերիզման տեղադրումը կանխելու համար, թե ոչ:»:

10. Ատենախոսությունում առանձին քննարկման առարկա է կատարողների արդարացի վարձատրության իրավունքը: Հաշվի առնելով կատարողների համար ստեղծված անբարենպաստ պայմանները, ինչպես նաև միջազգային պրակտիկայում վերջին զարգացումները՝ առաջարկվում է Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ նոր 45.1-ին հոդվածով.

«Հոդված 45.1. Կատարողի արդարացի վարձատրության իրավունքը

1. Կատարողը իր կատարումների և դրանց ամրագրումների՝ սույն օրենքի 45-րդ հոդվածով նախատեսված եղանակներով օգտագործման թույլտվություն տրամադրելու դեպքում իրավունք ունի ստանալու արդարացի վարձատրություն:

2. Կատարողի արդարացի վարձատրությունը պետք է ներառի միաժամանակ միանվագ վճար և կատարման յուրաքանչյուր օգտագործումից ստացված եկամուտից կատարողին վճարվող տոկոսային հատկացում: Կատարողի արդարացի վարձատրության հաշվարկման կարգը և պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Կատարման օգտագործման համար միայն միանվագ վարձատրություն կարող է սահմանվել բացառիկ դեպքերում՝

ա) երբ կատարողի դերը կատարման ժամանակ ունի օժանդակ բնույթ,

բ) կատարման օգտագործումից ստացված եկամուտը կամ կատարման հետ կապված ծախսերը հնարավոր չէ ճշգրիտ որոշել, կամ

գ) եկամտի ճշգրտումը կպահանջի ոչ ողջամիտ ծախսեր:

4. Կատարողը պահպանում է վարձույթով տրամադրման, ինչպես նաև հանրությանը մատչելի դարձնելու համար մնացորդային արդարացի վարձատրությունն ստանալու իր անօտարելի իրավունքը: Այդ իրավունքից հրաժարվելը պայմանագրով անվավեր է: Նշված իրավունքը կարող է իրականացվել նաև գույքային իրավունքների կոլեկտիվ կառավարման կազմակերպության միջոցով: Կատարողը պահպանում է արդարացի վարձատրությունն ստանալու իր իրավունքը նաև տեսալսողական ստեղծագործությունների օրինակները վարձույթով տրամադրելու, ինչպես նաև սույն Օրենքի 45-րդ հոդվածի երկրորդ մասում նախատեսված այլ ձևերով օգտագործման համար:

5. Կատարողները պարբերաբար, առնվազն երկու տարին մեկ անգամ, իրավունք ունեն ստանալու արդիական և ամբողջական տեղեկություններ իրենց կատարումների և դրանց ամրագրումների օգտագործման վերաբերյալ այն անձանցից, որոնց նրանք տրամադրել կամ փոխանցել են կատարման կամ դրանց ամրագրումների նկատմամբ իրենց իրավունքները: Տեղեկությունները պետք է ներառեն օգտագործման եղանակները, ստացված եկամուտները և հասանելիք վարձատրության չափը: Կատարողները իրավունք ունեն լրացուցիչ տեղեկություններ ստանալու ենթալիցենզառուներից այն դեպքերում, երբ լիցենզառուները չեն տիրապետում վերոնշյալ նպատակների համար անհրաժեշտ բոլոր տեղեկություններին: Այդ պարագայում լիցենզառուները պարտավոր են տրամադրել տեղեկություններ ենթալիցենզառուների ինքնության մասին:

6. Անկախ կողմերի միջև կնքված պայմանագրի դրույթներից և այն հանգամանքից, թե արդյոք կողմերը ի սկզբանե հաշվարկել էին կամ կարող էին հաշվարկել վերջնական վճարները, կատարողները իրավունք ունեն պահանջելու լրացուցիչ, համապատասխան և արդարացի վարձատրություն, երբ ի սկզբանե համաձայնեցված վարձատրությունը անհամամասնորեն ցածր է՝ համեմատած կատարումների օգտագործումից հետագայում ստացված բոլոր համապատասխան եկամուտների հետ:

7. Կատարողը իրավունք ունի ամբողջությամբ կամ մասնակիորեն չեղարկելու իր կողմից տրամադրված բացառիկ լիցենզիան կամ կատարման ամրագրումների նկատմամբ իրավունքների փոխանցումը, եթե տվյալ կատարման ամրագրումը երկու և ավելի տարիների ընթացքում փաստացի չի օգտագործվում: Եթե կատարումները ներառում են մի քանի կատարողների ներդրումը, իրավունքները չեղարկելիս անհրաժեշտ է ստանալ մյուս կատարողների համաձայնությունը:»:

**Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են
հեղինակի հետևյալ հրապարակումներում**

1. Mariam Ayvazyan, The right of distribution of performance fixations and first sale doctrine in the digital age, State and Law, Yerevan, Vol. 101, 2025, էջեր 86-111,
2. Արփինե Հովհաննիսյան, Մարիամ Այվազյան, «Կատարողների իրավունքների միջազգային իրավական շրջանակը՝ Հռոմի կոնվենցիայից մինչև Պեկինի պայմանագիր», Արդարադատություն Երևան 2025 2(61), էջեր 12-20,
3. Արփինե Հովհաննիսյան, Մարիամ Այվազյան, «Վերարտադրման իրավունքի մեկնաբանության առանձնահատկությունները թվային դարաշրջանում», Դատական իշխանություն, Երևան, հուլիս-սեպտեմբեր 2025, 7-9 (313-315), էջեր 26-35,
4. Արփինե Հովհաննիսյան, Մարիամ Այվազյան, «Կատարողների անձնական ոչ գույքային իրավունքները», Դատական իշխանություն, Երևան, ապրիլ-հունիս, 2025, 4-6 (310-312), էջեր 56-65
5. Մարիամ Այվազյան, «Հրապարակային հաղորդելու (հանրությանը հաղորդելու), հանրությանը մատչելի դարձնելու իրավունքները՝ որպես կատարողի հիմնական իրավունքներ», Օրինականություն, Երևան, 2024, № 136, էջեր 258-279,
6. Մարիամ Այվազյան, «Կատարողի արդարացի վարձատրության իրավունքը», Պետություն և իրավունք, Երևան N 2(96) 2023, էջեր 151-163,
7. Մարիամ Այվազյան, ««Կատարում» և «կատարող» հասկացությունները», Պետություն և իրավունք, Երևան, N 2(93) 2022, էջեր 90-103,
8. Մարիամ Այվազյան, «Կատարումները Մտավոր սեփականության իրավունքի համակարգում», Պետություն և իրավունք, Երևան, N 3(91) 2021, էջեր 72-85:

АЙВАЗЯН МАРИАМ ГЕВОРГОВНА

ПРОБЛЕМЫ ПРАВОВОЙ ОХРАНЫ ИСПОЛНЕНИЙ

РЕЗЮМЕ

Охрана исполнений и прав исполнителей занимает ключевое место в современной системе права интеллектуальной собственности, отражая более широкие структурные трансформации данной отрасли. Несмотря на то, что правовой режим прав исполнителей сформировался позднее по сравнению с другими институтами интеллектуальной собственности, в настоящее время он представляет собой одну из наиболее динамично развивающихся и концептуально сложных ее сфер. В условиях цифровой эпохи права исполнители сталкиваются с многоаспектными вызовами, обусловленными ускоренным технологическим прогрессом, глобализацией музыкальной и аудиовизуальной индустрий, а также глубокой трансформацией моделей создания, распространения и потребления контента.

В этих условиях всестороннее и системное исследование прав исполнителей приобретает особую значимость как в теоретическом, так и в прикладном аспектах. В работе рассматриваются следующие ключевые доктринальные и нормативные вопросы:

- структурная роль прав исполнителей в системе права интеллектуальной собственности;
- правовая охрана исполнений в рамках международно-правовых договорных режимов и проблемы их толкования и применения;
- объем и доктринальные основы личных неимущественных прав исполнителей;
- система имущественных прав, предоставляемых исполнителям, в частности вопросы толкования права на воспроизведение и права на доведение до всеобщего сведения записей исполнений;
- правовые сложности, связанные с правом на распространение и применением доктрины первой продажи (исчерпания права) в цифровой среде;
- концептуальные и практические проблемы обеспечения справедливого вознаграждения исполнителей и предоставления эффективных правовых гарантий защиты их имущественных интересов.

Исследование основано на применении как общенаучных, так и специальных юридических методов познания, включая анализ и синтез,

индукцию и дедукцию, обобщение, сравнительно-правовой анализ, логико-аналитический и системно-структурный подходы, а также метод правового моделирования.

Научная новизна работы выражается в выдвинутых на защиту положениях, сформулированных выводах, а также в теоретических обобщениях и научно-практических рекомендациях. Полученные результаты способствуют дальнейшему доктринальному развитию института охраны прав исполнителей и могут быть использованы в правотворческой деятельности, а также при осуществлении судебной практики в сфере права интеллектуальной собственности.

Исследование выполнено на кафедре гражданского права юридического факультета Ереванского государственного университета.

Основные положения исследования отражены в опубликованных автором научных статьях, а также были представлены на различных научных конференциях.

MARIAM GEVORG AYVAZIAN
ISSUES IN THE LEGAL PROTECTION OF PERFORMANCES

RESUME

The protection of performances and performers' rights occupies a pivotal position within the contemporary architecture of intellectual property law, reflecting broader structural transformations in the field. Although the legal regime governing performers' rights emerged later than other core branches of intellectual property, it has evolved into one of its most dynamic and conceptually intricate domains. In the digital era, performers' rights are confronted with multifaceted challenges driven by accelerated technological innovation, the globalization of the music and audiovisual industries, and the profound reconfiguration of content production, dissemination, and consumption models.

Against this background, a comprehensive and systematic examination of performers' rights assumes particular importance in both theoretical and applied dimensions. The research engages with the following principal doctrinal and regulatory questions:

- The structural role performers' rights within the intellectual property system;
- The protection of performances under international treaty regimes and the interpretative challenges arising from their implementation;
- The scope and doctrinal foundations of performers' moral (non-economic) rights;
- The system of economic rights granted to performers, particularly the interpretation of the rights of reproduction and communication to the public of fixations of performance;
 - Legal complexities surrounding the distribution right and the application of the first-sale (exhaustion right) doctrine in the digital environment;
 - The conceptual and practical challenges of securing equitable remuneration for performers and ensuring effective legal guarantees of their economic interests.

The study is grounded in both general scientific and specialized legal research methodologies, including analysis and synthesis, induction and deduction, generalization, comparative legal analysis, logical-analytical reasoning, system-structural examination, and legal modeling.

The scientific novelty of the dissertation is reflected in the propositions submitted for defense, in the conclusion, as well as in the theoretical generalizations and scientific-practical proposals formulated by the author. The findings contribute to the further doctrinal development of performers' rights protection and may inform legislative reform and the evolution of judicial practice in the field of intellectual property law.

The research was conducted at the Chair of Civil Law of the Faculty of Law of Yerevan State University. The main provisions of the thesis are reflected in scientific articles published by the author, and were also presented at various scientific conferences.